ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Ամենայն Հայոց Հայրապետը անձ չէ, այլ հայրապետական գաղափարի մարմնացում»,- ժամանակին գրել է Գէորգ արքեպիսկոպոս Զորէքչեանը: Հայոց կաթողիկոսները, յիրաւի, դարերի հոլովոյթին եղել են նուիրումն Աստծուն ու Հայրենիքին, մարմնաւորել են Հայրենիքի ու ժողովրդի գոյութեան ու մանաւանդ միասնութեան գաղափարը, հանդիսացել դրա ոչ միայն ջատագով, այլեւ խորհրդանիշ: Երջանիկ զուգադիպութեամբ աշնանային այս օրերին նշում ենք նրանցից երկուսի՝ Գարեգին Բ. Ներսիսեան եւ Գէորգ Զ. Զորէքչեան հայրապետների յոբելեանները:

1869 թ. ծնուեց Գէորգ Զորէքչեանը, այր իմաստուն, որին նախախնամութեամբ սահմանուած էր առաջնորդել Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին դժոխքի պարունակներով եւ հասցնել յոյսի մի հանգրուան, թոյլ չտալ, որ իր փիւնիկ թռչունը վերջնապէս մնայ մոխրի ու աւերակների տակ: Նա հաւատում էր Ազգի ու Եկեղեցու վերածնունդին, եղաւ դրա նախագծող ճարտարապետը:

Գէորգ Զ. Զորէքչեանը Քրիստոսի հօտն առաջնորդելու իր խաչն ստանձնեց 1945-ին, երբ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին շնչահեղձ էր լինում, երբ 800 աղօթատներից միայն ութն էին գործում ծանրագոյն պայմաններում, եւ սպառնալիօրէն պակասել էր հոգեւորականների թիւը: Իր սրբազան պարտականութիւնների կենսագործման ճանապարհին նա ստիպուած էր մաքառել հոգի ի բռին, քայլ առ քայլ վերանուաճելու խլուած իրաւունքները, շունչ ու կենդանութիւն հաղորդելու Մայր Աթոռին: Եւ կատարեց անհնարինը. կարողացաւ հասնել որոշ եկեղեցիների, Գէորգեան Հոգեւոր ճեմարանի, Մայր Աթոռի տպարանի վերաբացմանը, երբեմնի «Արարատ» ամսագրի ու «Էջմիածին» շաբաթաթերթի աւանդոյթի շարունակելիութեանը: Նրա հարթած ճանապարհով ընթացան Վազգէն Ա. Պալճեան եւ Գարեգին Ա. Սարգիսեան հայրապետները: Բայց հաւատի վերընձիւղման, նորոգութեան ու պայծառացման պատիւն ու տքնանքը նախասահմանուած էր Հայոց 132-րդ Կաթողիկոսին: Նա եկաւ արժանաւոր ժառանգորդը լինելու իր նուիրեալ նախորդների:

Ազգային-եկեղեցական ժողովի՝ 1999 թ. հոկտեմբեր 27-ի ընտրութեամբ, ապա

եւ նոյեմբեր 4-ի Ս. Օծութեամբ Մայր Աթոռի գահակալութեան կոչուեց Գարեգին Բ. Ներսիսեան Հայրապետը, որ նորովի պանծացնողը պիտի լինէր վերազարթօնք ապրող մեր Եկեղեցու: Նրան բաժին հասաւ իր նախորդների մեծ երազանքն իրականութիւն դարձնելու պարտականութիւնը, եւ նա պատրաստակամ յանձնառուն եղաւ՝ մարմին տալու դարատեւ երազանքին:

Սկսուեց Հայոց պատմութեան մի շրջափուլ, երբ բաւական յստակ գծագրուեցին Ազգի ու Եկեղեցու զարգացման նոր հորիզոններ: Պարտքի խոր գիտակցութեամբ ու նուիրումով Գարեգին Բ. Հայրապետը ձեռնամուխ եղաւ եռանդագին գործունէութեան, եւ, ահաւասիկ, անցած տասնամեակը անդուլ աշխատանքի եւ իրագործումների արգասաբեր մի շրջան եղաւ. տեղաշարժերն ակնյայտ են թէ՛ եկեղեցաշինութեան ասպարէզում, որ շէնքից աւելի ոգեղէն կառոյց է, հոգեւոր վերածնունդ, թէ՛ միաբանական կեանքում, թէ՛ քոյր Եկեղեցիների փոխյարաբերութիւններում, թէ՛, վերջապէս, մշակութային, կրթական, հրատարակչական բնագաւառներում: Արուած են առաջին քայլերը, որ առհաւատչեայ են գալիք առաւել մեծ իրագործումների. հրապուրիչ է հեռապատկերը, շատ են մտայղացումները: Այդ ամենը իրականութիւն դարձնելու համար հայ հաւատացեալ ժողովուրդը հայցում է Բարձրեալից, որ Իր Աջը հովանի դարձնի Մայր Աթոռին ու նրա ազգընտիր Գահակալին, որպէսզի առհաւէտ բարձր ու հպարտ ծածանուի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հազարամեայ դրօշը: